

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ Գնումների գնահատող հանձնաժողովի

2022 թվականի ապրիլի 04-ի N04-2/04.04.22 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման դրույթների կիրառմամբ

Գնանշման հարցման ծածկագիրը՝ **ՀՋ-ԳՀ-ԱՊՁԲ/2-ԲՈ-04/04.04.22**

Պատվիրատուն՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, որը գտնվում է ք.Հրազդան, Գործարանային 1 հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով:

Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել **12000 լիտր ռեզուլյար բենզինի** մատակարարման պայմանագիր:

Մատակարարման ժամկետ է սահմանվում **մեկ ամիս՝ պայմանագիրը կնքելու**

**օրվանից:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն գնանշման հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «ՀրազՋԷԿ»ԲԲԸ, ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով կամ Էլ. փոստ [info@raztes.am](mailto:info@raztes.am):

Հայտերի բացումը տեղի կունենա «ՀրազՋԷԿ» ԲԲԸ ք.Հրազդան, Գործարանային 1 հասցեում, **2022թ. ապրիլի 13-ին ժամը 11<sup>00</sup>-ին:**

Մույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Է. Մանամյանին, հեռ.՝ +374 93 404505:

Պատվիրատու՝ «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ

## Հ Ր Ա Վ Ե Ր

1. Սույն հրավերը տրամադրվում է ՀրագՋԷԿ ԲԲԸ կողմից 2022թ. ապրիլի 05- ին տեղեկագրում հրապարակված **ՀՋ-ԳՀ-ԱՊՁԲ/2-ԲՌ-04/04.04.22** ծածկագրով գնման գնանշման հարցման մասին հայտարարության հիման վրա:

2. Մրցույթի ծածկագիրը **ՀՋ-ԳՀ-ԱՊՁԲ/2-ԲՌ-04/04.04.22**

3. Գնման առարկայի բնութագիրը՝ **12000 լիտր ռեզույվար բենզին:**

4. Հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի ընտրությունը կատարվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

5. Մրցույթն իրականացվում է 1 փուլով, մատակարարումն՝ ըստ Կողմերի համաձայնեցրած ժամանակացույցի և հայտարարված ժամկետում՝ պայմանագիրը կնքելու օրվանից 1 ամսվա ընթացքում:

6. Հայտով նարկայացվող առաջարկված գինը նշվում է ՀՀ դրավով, գրված թվերով և տառերով և ներառում է հաշվարկման կարգը:

7. Հայտով նարկայացվող առաջարկված գնի հաշվարկը պետք է ներառի հայտատուի բոլոր ծախսերը, ներառյալ փոխադրումը ՀրագՋԷԿ-ի տարածք:

8. Հայտերը կբացվեն 2022թ. ապրիլի 13 ին, ժամը 11:00-ին նշանակված նիստում, ըստ հայտերի գրանցամատյանի հերթականության, հասցեն՝ ք. Հրագդան, 2302, Գործարանային 1:

9. Սույն գնման գործընթացում գնահատող հանձնաժողովը ղեկավարվում է Գնումների մասին ՀՀ օրոնքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ 526 -Ն որոշման դրույթներով:

10. Պայամանագիրը կկնքվի մրցույթում ընտրված մասնակցի հետ անգործության ժամկետը լրանալուց հետո:

11. Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝ գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Է. Սանամյանին, հեռ.՝ +374 93 404505:

Գնահատող հանձնաժողովի  
նախագահ՝

Է.Սանամյան